



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԲ. ՏԱՐԻ - ՓԵՏՐՈՒՍՐ 1936



12^{me} Année - Février 1936



Ֆրանսահայ Աւետ. եկեղեցին կը հաւատայ

Խմբագրական

Եզովա Նյոգնիր

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Քաջանայութեան ընտրութիւնը

Արքայի հնազանդութիւնը

Քոյր Հետվիկ Պիււ
Սամուէլ Պ.

Շնորհաց ծովէն

Թնժի ալ երեւցաւ

Լեւոն Գալստեան

Կենաց ածուկներէն

Մաքսաւորին աղօթքը

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչութիւններ

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Վ. Ս.

Մանկանց սրնակ

Հիւրասիրութիւն

Ընկերական թղթակցութիւն

Ուրախութեանս աղը «Յիսուս»

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաներին է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծախար կըզգան Աստուծոյ խօսքին անխաբիւս
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնաւ ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը երկու լեզուներով կը հրատարակուի: Հայերէն եւ թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 18 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ. ԲՐՕՖ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատր. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ թուրքերէն գիտցող մի անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր թուրքերէն յօդուածները:
ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտան վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ասրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխ իսկ

— ԲԱԺՆԵՐԻՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնէ՛ մեռելուն
ընէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանեղու խոտամունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1956

ԹԻԻ 2

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐ. ՀԱՒԱՏԱՑ

Դ.— ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆՑ

- ա. Անցեալի եւ ապագայի վերաբերեալ երկնային ներշնչեալ յայտնութիւններուն:
- բ. Աստուածաշունչ գրող լիակատար ներշնչման եւ հաւատքի ու հոգեւոր կեանքի վերաբերմամբ անոնց գերազանց հեղինակութեան:
- գ. Յիսուս Քրիստոսի Աւետարանին, որ բոլոր հաւատացեալներուն համար Աստուծոյ փրկարար զօրութիւնն է:

Ե.— ՄԵՂԻԻ ԵՒ ԿՈՐՍՏԵԱՆ, այսինքն թէ,

- ա. Համայն մարդկային ցեղը մեղքի տակ ինկած, կորուսած եւ դատապարտուած է:
- բ. Բոլոր ժամանակներու մէջ եւ ոեւէ մէթոսով ու պայմաններու տակ մարդս անկարելի է որ մեղքէն կարենայ ազատուիլ ինքնարդարացումով եւ կամ իրարօգնութեամբ:
- գ. Անդարձ ու աննորոգ հոգիներ իրենց մեղքերուն համար պատասխանատու եւ դատապարտութեան տակ են եւ հնթակայ յաւիտենական տանջանքի ու կորստեան:

Զ.— ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ, այսինքն թէ,

- ա. Անհրաժեշտօրէն կարեւոր է որ ամէն մարդ ապաշխարէ:
- բ. Կարելի է որ մարդս վերստին ծնունդով Աստուածային բնութեան հաղորդ եւ որդեգրութեան առանձնաշնորհումին ու փառքին մասնակից ըլլայ թէ՛ երկրի վրայ եւ թէ՛ երկնից մէջ:

(Շար.)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՀՈՎԱ ՉՅՈԳՆԻՐ

ԱՆՈՐ ԱՊԱԽԻՆՈՂՆԵՐԸ ՊԵՏԻ ՉՅՈԳՆԻՆ

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՅՈԳՆԻՐ

Եսայ. Խ. 28, 31, Բ. Կոր. Դ. 1

Եսայի այս քաջալերական խօսքերը կ'ուղղէ երուսաղէմի ոչ թէ ոսկեզօծ եւ խոստմնալից ժամանակաշրջանի մը մէջ, հապա բոլորովին յուսահատական պարագաներու տակ: Բաբելոնական գերեզմարութիւնը արդէն մարգարէացում է (Դ. Լթ.): Եւ ազգը երթալով կը հեռանայ Աստուծոյ պատուէրներէն: Նախկին Յուդայի յաղթական ցեղը հետգհետէ կը տկարանայ, կը վատասուի:

Արդ, մարդկային բոլոր տրամաբանական պատճառները ի մի հաւաքելով չպիտի կրնայինք քաջալերական եւ ոսկեզօծ բառ մ'իսկ գրանել անոնց համար, այսու ամենայնիւ Տէրը կ'ըսէ, «Ով Յակոբ ի՞նչու կ'ըսես, եւ ով Իսրայէլ ինչո՞ւ կը զրուցես թէ իմ ճամբաս Տէրոջմէ ծածկուեցաւ եւ իմ իրաւունքներս իմ Աստուծոյմէս զանց եղաւ: Միթէ չգիտցա՞ր (քանզի յանցանք մըն է եթէ մինչեւ հիմա չգիտցար) կամ չլսեցի՞ր որ յաւիտենական Աստուածը եկիւ իմ երկրի ծայրերուն Սոնեղի, ի յյոգնիր»:

Կարծէ որ կանգ առնենք մենք ալ այս համարներուն առջեւ:

Մեր ազգային պարագաներն ալ անոնցինէն տարբեր չեն: Ներկայիս թերեւս քալ մը աւելի յառաջացած ենք մենք թշուառութեան եւ անյուսութեան մէջ: Ուստի Աստուծոյ խօսքը կրկնակի զօրութիւնով լսելի ըլլալու է անոնց, որոնք տրտմած են, անգործ, թշուառ եւ յուսահատ են, նաեւ անոնց որ հոգեւորապէս տկարացած են:

Աստուածային այս խօսքը խրախուսիչ եւ քաջալերական է. վասնզի Աստուած յաւիտենական է, յաւիտեանս կը գործէ, կը մտածէ: Անոր համար չկայ երէկ կամ այսօր, Անիկա միշտ նոյնն է, Իր սիրովը եւ օգնող ձեռքովը: Նա անցեալի մէջ բնաւ չլքեց Իր զաւակները: Զանոնք առիւծներու բերնէն ու կրակէն ազատողը Ան է: Սուրին առջեւէն ու ջուրին մէջէն ապահովութեամբ անցնողը Ան է: Անապատին չորութեան մէջ ապառաժէն ազրիւր հանողը, Մեռոյի ջուրերը քաղցրացնողը, անապատին մէջ առօթի

ժողովուրդին հաց ու միս տուողը Ան է: Ան նոյն յաւիտենական Աստուածն է: Առիւծի կորիւնները չքաւորութիւն ու անօթութիւն կը կրեն, սակայն Տէրը փնտռողներուն բարութիւն մը պակաս պիտի չըլլայ: Քանզի կարողութիւն չունեցողին շատ զօրութիւն հասցնողը Ան է: Անիկա Ստեղծիչն է եւ Իր ստեղծածները չլքեր, չկրնար լքել: Անիկա սէր է եւ Իր սիրոյ ծրագրներն ունի ամէն մէկուն համար եւ այդ ծրագրները միշտ բարի են: Մի քանի թէ Անիկա թէեւ ստեղծիչ է, բայց ինծի ի՞նչ: Քեզի է Աստուծոյ խօսքը ով մարդ, թէ Անիկա երկրի ծայրերուն Ստեղծիչն է, այսինքն ամենուրէջք ըլլալով Իր աչքէն բան չվրիպիր: Երկինքի փառաւորութենէն մինչեւ տիեզերքի հեռաւոր ծայրերը կը լեցնէ Ան: Եթէ երկինքը ելլէս Ան հոն է, եթէ դժոխքը անկողինդ ընես, ահա Ինք հոն է, եթէ արշալոյսի թեւերը առնես ու ծովուն վերջի ծայրերը բնակիս, հոն ալ Անոր ձեռքը քեզի պիտի առաջնորդէ ու Իր աջ ձեռքը քեզ պիտի բռնէ:

Նաեւ Անոր իմաստութիւնը չքննուիր, քանզի Ինք ամենագէտ է: Ու եթէ ամենագէտ է, ուստի ալ պատճառ մը չունիս վախնալու թէ Անիկա քու վիճակդ չգիտեր: Անիկա գիտէ, Անիկա կը տեսնէ եւ ամէն ատեն, ամէն պարագայի մէջ Անոր բարի ձեռքը քու վրադ կը հանգչի: Եւ է մեր Աստուածը:

Անոր մէջ պարփակուած են հազարաւոր խոստումներ, որոնցմէ մին է մեր վերոյիշեալ համարը: Անոր ապաւինողները պիտի չյոգնին (Ես. Խ. 30-31): Այս խոստումը եթէ աշխարհի մարդոց համար երեւի տարտամ եւ օդային խոստում մը, բայց ոչ Անոր ապաւինողներուն համար, որոնք աստուածային բոլոր աղբիւրներով հաշուելու իրաւասութիւնն ունին: Անոնք կը հաւատան Աստուծոյ խօսքին ճիշդ այնպէս ինչպէս որ է եւ ահա այդ է իրենց զօրութիւնը որ զիրենք երբեք չքած չէ:

Դիտելի է թէ այս խոստումները սեղմուած չեն մեր նիւթական պէտքերու սահմանին մէջ միայն, հապա մեր նիւթական, մտքի եւ հոգեւոր բոլոր պիտոյքներու սահմանէն ալ անդին կ'անցնին: Կ'ուզե՞նք հաւատալ՝ այս է խոստումը, եթէ չհաւատանք՝ խոստումը չխափանուիր, եւ միայն անհաւատութեան պատճառաւ է որ զայն մեր վրայ կատարուած չպիտի տեսնենք: Թէ որ հաւատաս Աստուծոյ փառքը պիտի տեսնես:

Այս խոստման հաստատութիւնը ապացուցին հին նահապետները իրենց կեանքովը: Աբրահամ, Մովսէս, Դանիէլ, Սամուէլ, որոնք չյոգնեցան ու

չթուլցան, չտկարացան, հապա մեծամեծ փորձութեանց մէջ իսկ արմաւենիի պէս ծաղկեցան, ծերութեան ատեն ալ պտուղ տուին, պարարտ ու կանանչ փնային եւ պատմեցին թէ Տէրը ուղիղ է, Աստիկա վէժ է եւ անիրաւութիւն չկայ Ասոր մէջ:

Պօղոս առաքեալ ալ մեր բնաբանին Գ. կէտին մէջ իր կեանքովը զայս կ'ապացուցանէ: «Ուստի չենք յոգնիր»: Ձանձրանալ է մեր հայերէն թարգմանութիւնը, բայց Լուսեր յոգնիլ կը թարգմանէ եւ ինձ կուգայ թէ յոգնութիւն բառը այս տեղին աւելի լաւ պիտի յարմարէր, խօսքին բոլոր զօրութիւնը երեւան հանելու: Երկու անգամ կը յիշէ նոյն բառը նոյն գլխուն մէջ (հ. 1, 17) եւ նոյն զօրութիւնով: Պօղոս կ'ապրէ, ամէն կողմէն վշտացած է, կարօտեալ է, հալածուած է, ամէն ատեն Յիսուսի մահը իր մարմինին մէջ կը կրէ, Յիսուսի համար միշտ մահուան կը մատնուի եւ կը տեսնէ մահուան իր մէջ ներգործելը եւ դուրսի մարդուն ապականիւլը, բայց չյոգնիր, քանզի վայրկեանական թեթեւեղութիւնները առաւել քան զառաւել փառաց յաւիտեանական գերազանցութիւն կը գործէ իրեն: Ու ճիշդ այդ տառապանաց եւ տուեալանքներուն մէջ ինք արդէն յաղթութեան վճիռը տուած է հերոսական շեշտով մը, — Գոհութիւն Աստուծոյ որ միշտ յաղթող կ'ընէ մեզ Բրիստոսով ու զինք ճանչնալուն հետը մեզմով յայտնի կ'ընէ, Բ. Կոր. Բ. 14:

Ախոյեանն է Ան, որուն ձեռքին մէջ կը գրտնոյն Աստուածային ամենակատարեալ պատերազմական զէնքերը ամրոցներ քակելու: Աստուծոյ զիտութեանը ղէմ բոլոր հպարտացած բարձր բաները ու բոլոր միտքերը Բրիստոսի հնազանդութեանը գերի ընելու, ու վրէժ առնելու (ա'հ, ի'նչ վրէժ) ամէն անհնազանդութենէ (Բ. Կորն. Ժ. 4-6):

Պօղոս կ'ընէ ասիկա, քանզի թէ եւ ինքը մարմնի մէջ կը քալէ, բայց իր զինուորութեան զէնքերը մարմնաւոր չեն, հապա Աստուծմէ: Աստուծային զօրութեանց շտեմարանները, երկնային բոլոր աղբիւրները բաց են Աստուծոյ այս գերիին համար:

Նոյնն է խնդիրը նաեւ քեզի ու ինծի համար սիրելի ընթերցող, թէ որ ալդ զաղտնիքը լուծուած է մեզի համար եւ թէ որ Բրիստոս բոլորովին տէր եղած է մեր անձերուն: Առաքեալը Կողոսացոց՝ իր սիրած կենդանի եւ զեղուն եկեղեցիին կ'աղաղակէ, «Բրիստոս ձեր մէջ փառաց յոյսը»: Օ՛, կանգ առ այս խօսքին առջեւ: Այս

ցոյց կուտայ մեզ թէ բոլոր բաներուն լրումը, Ալֆան եւ Օմեղան, ներկան ու ապագան, բոլոր լեցունութիւնը Բրիստոս է: Բրիստոս զաղտնիքը մեր կեանքին ու սրբութեան: Բրիստոս զսպանակը մեր գործունէութեան: Բրիստոս մեր ամէն ինչը, մեր «Ամէն բանը ամէն բանի մէջ»:

Ուստի մենք ես զժուարութիւն չենք զգար Պօղոսի պէս բացազանչիւլէ. վասն որոյ մենք չենք յոգնիր: Չենք յոգնիր ալսօր, երբ վաղը պայ՝ վաղուան մէջ պիտի ըսենք մենք չենք յոգնիր, եթէ Տէրը գալ տարին ալ պարգեւէ մեզի՝ այն օրն ալ պիտի ըսենք մենք չենք յոգնիր, զի մեր Զօրապետը մեզի հետ է ու Ան չյոգնիր: Չենք յոգնիր, երբ ձախողութիւնն ու առօրեայ գործերը մեզի շատ խորհիլ տան եւ զմեզ յուսահատութեան մօտեցնեն: Չենք յուսահատիր երբ անգործ ենք, չենք յոգնիր երբ կը տանջուինք մարմնական ցաւերով, երբ կը տառապինք հիւանդութեան եւ տարիներու ծանր բեռան տակ: չենք յոգնիր երբ մարմնական ուժերը մեզ չընեն: Երիտասարդներն անգամ պիտի յոգնին ու թուլնան եւ ընտիր կտրիճները բոլորովին պիտի իյնան բայց Տէրովը ապաւինողներուն ուժը պիտի նարոգուի: Չենք յոգնիր, վասնզի մեզմէ առաջ զացող վկաներուն ամպը չյոգնեցաւ, յաղթեց ու կը տիրէ: Չենք յոգնիր օրուան ծանրածանր գործերուն մէջ, չենք յոգնիր ամենօրեայ ներքին պայքարներու մէջ, աշխարհի թուփին ու մուրին տակ, անարգանքին ու լուտանքներուն տակ, վասնզի այս կեանքին ժամանակաւոր չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով որ մեզի պիտի յայտնուի: Չենք յոգնիր յուսալէ երբ մահն իսկ մեր առջեւ կայնած է: Կ'անցնինք գետէն անդին, զիտնալով թէ հանգիստը եւ աւելի փառաւոր ժամանակը մեզի կ'ապասէ: Զմեզ սիրող եւ մեզի համար մեռնող ու յարութիւն առնող Փրկչին հետ պիտի ըլլանք եւ թագաւորենք յաւիտեանս: Չենք յոգնիր, քանզի մենք առանձին չենք: Այսօր դեռ կան մեզի հետ ծանօթ եւ անծանօթ մեծ բազմութիւն մը, որոնք մեզի հետ արիւն քրտինք մտած ամեն օր կը յաղթեն ու յաղթական ընթացքը կը վազեն, յաջողութենէ յաջողութիւն՝ վերջնական յաղթութեան գիտակցութիւնով: Մենք անոնց հետ կողք կողքի, թիկունք թիկունքի կը յառաջանանք վատասիրտները մխրթարելով, տկարներուն ձեռնտու ըլլալով: Այս յաղթական խումբը չյոգնիր. մենք չենք յոգնիր, վասնզի մեր Տէր Եհովա Ինքը չը յոգնիր, վերջին յաղթութիւնը Իրենն է: Ալէլուիա Ասոր փառք յաւիտեանս: Ամէն: Յ. Ն. Ղ.

ԱՐՐԱՄԻ ՀՆԱՋԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Փամբ հասաւ որ ձրգես հայրենիքը մեծանուն,
 Իր լեռներով վեհապանծ, անտառներով լի, անհուն,
 Դաշտերով բիւ, ծաղկազգեստ, ջրերով ջինջ յորդահոս,
 Գեղով մոգիչ, բայց մեղքով սողոմատիպ Եգիպտոս:

Փամբ հասաւ, հաւատքի անգուգելի ո՛վ հերոս,
 Քաշուելու դուրս հայրենի սահմաններէդ հեթանոս,
 Բաբելոնը անգօմնէ, Նինուէին հետ ձրգէ ուր,
 Ու հեռացի՛ր, հեռացի՛ր, այդ վայրերէն անմաքուր:

Դուն չես գիտեր թէ ամբողջ հորիզոնէ հորիզոն,
 Կայսերութիւնըդ հուժկու, խլրոխտ ու պէս Ամազոն՝
 Իր ուժերով, իր փառքով, իր զանկերով հանճարեղ,
 Իր հաճոյքով, իր մեղքով անէծքի տակ է ահե՛ղ:

Հայրենիքիդ հետ ձրգէ նաեւ ազգ ու ազգական,
 Զաղացականէն սկսեալ թագաւորըդ պատուական:
 Սիրտըդ երբեք չը կապուի, ո՛չ հրգօրին ո՛չ խեղճին,
 Աչքերըդ սուրբ, անոնցմէ եւ ոչ մէկին թող հաճին:

Այս բոլորէն վերջ՝ նայել որ անոնց պիղծ արծաթին,
 Եւ բեհեզին ու դիրքին եւ արցունքին ժըպիտին,
 Կամ սրնամէջ հաւատքին ու կրօնքին սուտանուն,
 Սիրտըդ երբեք չը կապուի աւանդական բարքերուն:

Տես ինծի պէս կամքի մէջ ստեղծած եմ քեզ ազատ.
 Կրնաս մերժել կամ ընել հրամանըս հարազատ:
 Ես կ'ուզեմ որ կըտրուիս օճախէդ իսկ սիրակէզ:
 Որ կապուիս ինձ, ինչպէս ես՝ կապուած եմ քեզ Հօր մը պէս:

Որքան քեզի աւանդած հրրամանս է ահաւոր,
 Նոյնքան անոր զուգակցող օրհսութիւնն է փառաւոր.
 Հընազանդիր ու քեզի ես ժառանգել պիտի տամ
 Կաթի, մեղրի երկիր մ'յորդ, քարիքներով քաղցրահամ:

Աստուած լռեց: Բայց իր սուրբ հրրամանին տակ ահա
 Աբրամը լուռ, ծնրադիր եւ գըլխիկոր կը խոկա՛յ...
 Եւ կը կշռէ աշխարհ իր հըմայքներով անցաւոր,
 Ու Արարչին անյեղլի խոստումները դարաւոր:

Ահա վճռեց: —Հայրենիք, ազգ, ազգական՝ նոյնիսկ տուն,
 Իրենց բոլոր ձայներով ընդմիշտ դառնան թող նըկուն.
 Ամբողջ աշխարհ ոտքիս տակ, ետիս գնա Սասանա,
 Զի ես կ'ուզեմ կէտ առ կէտ հընազանդիլ մինչեւ մահ,
 Հընազանդիլ ո՛վ Աստուած, միայն Քեզի՛ ու Քեզի՛...

ՍՍՄՈՒԷԼ Պ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

(Ելից ԻԸ. 1: Ա. Պետ. Բ. 9: Յայտ. Ա. 6)

Դասախօսուած Օր. Հետվիկ Պիլի կողմէ Միու-
թեան ժողովին մէջ

○○○○○○○○○○

Թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ քահանայութեան կոչումն ու ընտրութիւնը անառարկելիօրէն դրական եւ յստակ ճշմարտութիւն մըն է: Մեզի, ծառայութեան կանչուածներու համար, այս թանկագին նիւթը քննելը ոչ միայն հետաքրքրական, այլ մանաւանդ անհրաժեշտ ու շահեկան աշխատութիւն մըն է: Արդ, ժամանակը գործածենք այս նիւթին խորացման համար:

Ա.— Ամենէն առաջ նկատի առնենք թէ Աստուած Իր քահանաները ուրկէ՞ ընտրեց:

1) Ելից ԻԸ. 1ին մէջ այսպէս կը կարգանք.— «Եւ դուն քեզի մօտեցուր քո եղբայրդ Ահարոնը ու անոր որդիները անոր հետ ԻՍՐԱՅԷԼԻ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ՄԷՋԷՆ, որպէսզի Ինծի քահանայութիւն ընեն»: Ըսել է Տէրը Իր քահանայացուները ԻՍՐԱՅԷԼԻ որդիներուն մէջէն կ'առնէ: Բնեցէք Աստուածաշունչը եւ պիտի տեսնէք որ անապատառնակ այս խեղճ ժողովուրդը ազգ կոչուելու իսկ արժանի չէր: Յետոյ, դիւրին է հաստատել թէ որքան յաճախ Իսրայէլ Աստուծոյ հեռանալով ամենազարշելի կոապաշտութեան հետեւեցաւ (Ամով. Ե. 25-26 եւ Եզեկ. Ի. 13-31): Հակառակ Իսրայէլի այսքան ԱՆՆՇԱՆ եւ ԱՆԱՐԳ ժողովուրդ մը ըլլալուն, Տէրը կը հաճի այս ազգին որդիներուն մէջէն Իրեն քահանաներ ընտրել: Հոս յայտնի կը տեսնենք որ Աստուած Իր շնորհքին գերազանց ճոխութիւնը կը ցուցնէ:

2) Տէրը մեզ ալ քահանաներ ըլլալու կանչած է: Ինչպէս Հին Ուխտի քահանաներուն ծագումը քննեցինք, մերինն ալ նկատի առնենք.— Եփես. Բ. 1ին մէջ հետեւեալ նկարագրութիւնը կ'ընէ առաքեալը, մեր նախկին վիճակին շուրջ, հմր. 1, «Յանցանքներու եւ մեղքերու մէջ մեռած», հմր. 2, «ապստամբութեան որդիներ», հմր. 3, «բարկութեան որդիներ»: Ի՛նչ ողբալի վիճակ է այս: Եւ որպէսզի Աստուծոյ անքննելի շնորհքին վրոյ հիանանք, ապշինք ու խոնարհինք,

պէտք է մեզի յաջորդ համարներն ալ մէջ բերել. հմր. 4, 5, «Բայց Աստուած որ մեծ է ողորմութիւնով... ԵՐԲ ՅԱՆՅԱՆՔՆԵՐՈՒ ՄԷՋ ՄԵՌԱՍ ԷԻՆՔ, մեզ Քրիստոսի հետ ԿԵՆԴԱՆԱՅՈՒՅ».

հմր. 6, «Եւ Անոր հետ մեզ ՅԱՐՈՒՅ եւ Անոր հետ մեզ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոսով»:

Արդ, թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարանը կը հաստատեն սա հիմնական ճշմարտութիւնը թէ, ԸՆՏՐՈՒԹԵԱՆ մէջ Աստուած Իր գերազանց «Շնորհքէն» զուրս ոչ մէկ մարդկային արժանիք նկատողութեան կ'առնէ:

Անկասկած Մովսէս եւ Պետրոս առաքեալ նոյն Հոգիէն ներշնչուած գրեցին սա խօսքերը.— «Մօտեցուր Ահարոնը ու անոր որդիները իսրայելի որդիներուն մէջէն (թէ՛ եւ անշան, կոապաշտ, գերի, մեռած, ոչինչ ազգի մը անդամներ), որպէսզի Ինծի քահանայութիւն ընեն»: «Բայց դուք ընտիր ցեղ մըն էք, Թագաւորական քահանայութիւն, սուրբ ազգ, սուրբական ժողովուրդ մը, որպէսզի քարոզէք Անոր առաքինութիւնները որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց... որ առեն մը ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստուծոյ ժողովուրդն էք» Ա. Պետ. Բ. 9, 10:

Բ.— Աստուծոյ կողմէն եղած ընտրութեան կերպին մէջ կարեւոր ուրիշ կէտ մըն ալ կայ որ քաղաքութեան արժանի է. եւ ահաասիկ:

1) Քահանայապետին հետ իր որդիներն ալ քահանայութեան կոչում կ'ստանան: Հօր եւ որդիներու ընտրութիւնը կ'ըլլայ միասին եւ միաժամանակ: Այս կերպ ընտրութեան մէջ չէ՞ք նշմարել ՇՆՈՐՀԻՆ ուրիշ մէկ կողմը, որ որդիներուն ողորմութիւն կ'ըլլայ, որպէս թէ ընտրութիւնն ալ ժառանգական ըլլար: «Ահարոնը եւ անոր որդիները...»: Ո՛չ առաջ, ոչ վերջը, այլ նոյն ատեն քահանայութեան կ'ընտրուին քահանայապետը եւ իր որդիները: Սքանչելի՛ խորհուրդ մը ծածկուած է այստեղ: Նոր Կտակարանի լուսով քննենք այս, ու պիտի զմայլինք: Նայեցէք.—

2) Անցեալին մէջ էրը Յիսուս «Աստուծոյ կոչուեցաւ քահանայապետ...» (Եբր. Ե. 10) մեզի համար ալ գրուեցաւ թէ «մենք Քրիստոսի մասնակից եղած ենք» (Եբր. Գ. 14): Այս երկու համարներէն կը հետեւցնենք թէ ինչպէս, Ահարոնի որդիները Ահարոնի հետ միասին եւ միաժամանակ քահանայութեան ընտրութիւնը ստացան, նոյնպէս եւ մենք որպէս որդիներ (Յովհ. Ա. 12, 13 եւ Հով. Ը. 16-17) քահանաներ ըլլալու ընտրուեցանք Յիսուս Քրիստոս մեր մեծ քահանայապետին հետ: Ահա թէ ինչո՞ւ մենք կոչուած ենք «Թա-

զաւորական քահանայապետութիւն» (Ա. Պետ. Բ. 9):

Հակառակ այս փառաւոր ընտրութեան, յաճախ պատահած է ինծի, որ երբ ես իմ վըաս նայած եմ, անարժանութեանս եւ անյարմարութեանս զիտակցութիւնովը ընկճուած՝ աղաղակեմ, «Ո՛հ, Տէր, ես ո՞վ եմ, այդ Մեծ Գործին ով կ'ուզես զրկէ, բայց ոչ զիս: Կասկած չունիմ որ դուք ալ նոյն փորձառութիւնը ունեցած էք: Երբեմն նոյն իսկ այդ անարժանութեան զգացումը այնքան գորաւոր եղած է մեր մէջ որ ետ քաշուիլ եւ հըրաժարիլ ուզած ենք, չէ՞: Եւ իրապէս ալ մեզմէ աւելի արժանաւոր եւ կարող անձնաւորութիւններ կան, բայց այս պաշտօնը Տէրը մէ մեզի եղած ճնշիք մըն է: Իր արխանովը գնուեցանք Իրեն որդիներ ըլլալու, եւ Իր ճնշիքովը ընտրուեցանք Իրեն քահանաներ ըլլալու: Փա՛ռք Անոր յաւիտեան:

Արդ, որպէսզի այս բարձր պատասխանատու ընտրութիւնը մեզ շլատող բեռ մը չդառնայ ալ վսեմ եւ օրհնեալ պաշտօն մը, հարկ է մեզի միշտ յիշել թէ, Աստուած մեզ ընտրած չէ մեր արժանիքին եւ կարողութեան նայելով, այլ Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի, Որուն անդամներն ենք մենք: Տէր Յիսուս ինքն է մեր արժանիքը եւ մեր կարողութիւնը: Աստուած միայն Քրիստոսը կը տեսնէ եւ մեզ ալ Անոր մէջ: Այս պատճառաւ մեր կոչումը եւ ընտրութիւնը եւ զիրքը խիստ բարձր են: Չմոռնանք:

Գ. — Ահարոնի եւ անոր որդիներուն ընտրութեանը մէջ երրորդ գեղեցիկ խորհուրդ մըն ալ կայ որ պէտք է վեր հանենք:

1) Տէրը կ'ըսէ «Բեզի մնա՛ցուր» (Ելից ԻԸ. 1): Այս խօսքէն բնականօրէն կը հետեւցնենք թէ Ահարոն եւ իր որդիները իրենց բնականեղին պիտի ձգէին: Սրբաբանին մօտենալու համար իրենց տեղէն պէտք էր հեռանալին: Հարկաւ այդ պաշտօնին սիրոյն եւ եղած հրամանին համար ձգել իրենց նախկին տեղը, զատուլցան հոնկէ, տեղափոխուեցան: Ե՞րբ ստիպուած եղան անոնք իրենց բնականեղին զատուիլ. — երբ որ կանչուեցան: Անկասկած անոնք վարժուած էին բունակի կեանքին: Որքա՛ն հաճելի էր անոնց հոն կենալ, հոն ապրիլ, հոն գործել: Բայց, որպէսզի սրբաւորանը անոնց նոր բնականեղին դառնայ, պարտաւոր էին անոնք իրենց հին տուներուն տեղը կամ բանակն ու վրանը թողուլ:

Հին Կտակարանին մէջ յաճախ կը հանդիպինք «ձգել», «Թողուլ», «Ելիլ» բառերուն: Այս բառերը պարզ աղտայայտութիւն ըլլալէն աւելի աստ-

ուածաշնչական խորհուրդներ են: Օրինակի համար, Տէրը Աբրահամի պատուիրեց ըսելով, «Ելիլ քու երկրէդ եւ քու ազգականներէդ», (Գործ. Է. 3, Ծննդ. ԺԲ. 1): Աբրահամի առջեւ նոր երկիր մը եւ նոր կեանք մը կար ժառանգելիք: Այդ ժառանգութեան: Կրցաւ տիրանալ միայն երբ իր հօրը տունը Թողուց, երբ Ուր քաղաքէն ելաւ, երբ Խառան ալ ձգեց:

2) Բանալի զոր Ահարոն եւ իր որդիքը պիտի ձգէին, աւետարանական լեզուով կոչուած է «Աշխարհ», (Ա. Յովհ. Բ. 9): «Շին մարդ», (Եփես. Դ. 22): «Անձ կամ ես», (Մատթ. ԺԶ. 24): «Մեկաց մարմին կամ մեղք կամ հին խմոր», (Հոով. Զ. 8, Ա. Կոր. Զ. 7): Աստուծոյ փափաքն ու հրամանն է քահանայական կոչում եւ ընտրութիւն ունեցողներուն «Թողուլ», (Ղուկ. Թ. 60), «ձգել», (Ա. Պետ. Բ. 1), «Դուրս ելիլ, զատուիլ», (Եբր. ԺԳ. 13 եւ Բ. Կոր. Զ. 17) այս բաներէն: Սակայն Սատանային ամենամեծ փափաքն ու ջանքն է մեզ քահանայական փառաւոր կոչումէն վրիպեցնել: Եւ ի՞նչպէս կրնայ յաջողիլ եթէ ոչ մեզ համոզելով որ բնալի չձգենք ու դուրս չեկնինք, անձէն ու մարմինէն չբաժնուինք, հին մարդը իր գործերով մեր վրայէն չհանենք:

Փորձութիւն կայ որ քահանայական ընտրութիւնը ըլլալէ եւ ապրելու ու գործելու համար Սրբաբանին մէջ մտնելէն վերջն իսկ թուաւոր դանուինք մեղքին: Մտքերնիս ըլլան Ոփնի ու Փենեհէն քահանաները, նաեւ Նադաբ եւ Աբիւդ, Ահարոնի երէց որդիները (Ա. Թադ. Ա. 3, Բ. 12-17, Թուոց Ժ. 1):

Անսուրբ բաներու վարժուելու հաւանականութիւնը միշտ եւ ամենուս կայ: Զգուշանա՛ք թե՛ թեւաբարոյութեան, մեղսախառն խօսակցութիւններէ, անվայել վարմունքէ եւ արտայայտութիւններէ (Եփես. Ե. 1-12): Սրբապղծութեան վրտանդը խիստ դիւրագրաւ է: Զարմանալու չենք, եթէ մենք ու մեր եկեղեցիները յաղթական կեանքէ եւ պողաբերութեան զուրկ ենք, երբ՝ ձգել, Թողուլ, ելիլ բառերը իրենց բովանդակ զօրութեամբ զգործնականացուցած չենք: Մեղքը մեզ կ'ուժաթափէ, մեր քարողութիւնը անգոր կը դարձնէ, մեր կեանքն ու գործունէութիւնը կ'աւաղացնէ: Ծիշդ այս պատճառաւ, մեզ քահանայական կոչման ու ընտրութեան մէջ հաստատել ուզող Տէրը կը հրամայէ մեզի, «Ասոր համար ելէք անոնց մէջէն ու զատուեցէք կ'ըսէ Տէրը ու պիղծ բանի մի դալչիք»: Ի՛նչ օրհնեալ պողաբերութիւն կայ զատուած կեանքին մէջ:

Դ. — Չորրորդ եւ վերջին խորհրդածութիւնը

որ այս օրհնեալ նիւթին շուրջ կ'ուզենք ընել, այս է. —

1) Ահարոն եւ իր որդիները ոչ միայն բանալէն պէտք էր գատուէին, այլ նաեւ սրբարանին մէջ կենալու էին: Այս ներշնչումը կը քաղենք Ղեւտ. Ը. 33-35 համարներէն, «եօթը օր ժողովքի խորանին դռնէն դուրս մի ելլէք, մինչեւ օրհնութեան օրերուն վերջին օրը... որպէսզի չը մեռնիք»: Եօթը թիւը ինքնին կատարելութիւն կը նշանակէ, որ ըսել է միշտ: Զգէ որ սուրբ հեղինակը կ'աւելցնէ, «մինչեւ ձեր վերջին օրը», Այո՛, քահանայութեան կանչուողը պէտք էր միշտ, մինչեւ իր կեանքին վերջին օրը Սրբարանին մէջ կենար, քահանայապետին առջեւ, Տէրոջը ծառայելու համար: Ի՞նչ բարձր կոչում է քահանայութեան պաշտօնը: Ի՞նչ օրհնեալ առանձնաշնորհ է սրբարանին մէջ քահանայապետին առջեւ կենալ: Սաղմոսերգուն անկասկած այս փափաքով բռնկած կ'աղաղակէ, «Բան մը կը խնդրեմ Տէրոջմէն ու ասիկա կ'աղաչեմ, որ կեանքիս բոլոր օրերը Տէրոջը տանը մէջ բնակիմ» (կենամ) Տէրոջը վաղելութիւնը տեսնելու համար, (Սաղ. ԻԷ. 4):

2) Նոյնատեսակ պատուէր մըն ալ կայ Նոր Ուխտի քահանաներուն: Տէր Յիսուս կ'ըսէ, «Իմ մէջս կեցէք»: Յովհաննէս առաքեալ ալ կը յորդորէ, «Անոր մէջ կեցէք», (Ս. Յովհ. Բ. 28): Լաւ, բայց ինչո՞ւ համար սրբարանէն դուրս ելլելու չեն քահանաները եւ «Անոր մէջ կենալու են», Պատճառները շատ են, բայց էն կարեւորներէն մի քանին յիշենք. —

ա) Ղեւտ. Ը. 33-35ի մէջ կը կարդանք, «Դուրս մի ելլէք... որպէսզի չմեռնիք»: Պատուիրուած է սրբարանին մէջ կենալ: Անկէ դուրս ելլելը պատուիրազանցութիւն է, ըսել կ'ուզեմ մեղք է, եւ մեղքին վարձքը մահ է»: Ուստի «դուրս մի ելլէք, որպէսզի չմեռնիք»:

բ) Սաղ. ԻԷ. 4ին մէջ կը կարդանք, «Կեանքիս բոլոր օրերը Տէրոջ տանը մէջ բնակիմ, Տէրոջը վայելչութիւնը տեսնելու համար»: Որքան որ զմայլելի է մեր թագաւորը եւ քահանայապետը իր մեծավայելչութեանը մէջ տեսնել, նոյնքան ալ օրհնաբեր եւ շահեկան է այս մեզի, վասնզի զրուած է, «Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերին կը նորոգուինք փառացի փառս»: Բ. Կոր. Դ. 18): Ըսել է Տէրոջը մեր քահանայապետին փառաւոր պատկերին փոխուելու համար, անհրաժեշտ է մեզի Սրբարանին մէջ կենալ, միշտ մեր մեծ քահանայապետին առջեւ: Այն ատեն միայն մեր դէմքերն

ալ, ըսել կ'ուզեմ մեր կեանքը, Մովսէսի պէն՝ Աստուծոյ մեծավայելչութիւնը պիտի հագնիք: Պիտի փայլինք...

գ) Ա. Յովհ. Բ. 28ին մէջ ալ կը կարդանք, «Անոր մէջ կեցէք, որպէսզի երբ Անիկա յայտնուի, մենք համարձակութիւն ունենանք ու վնկէ չամչնանք իր գալու ատենը»: Բացարձակ համարձակութիւնը տեսականօրէն Անոր մէջ կենալէն յառաջ կուգայ: Յարատեւօրէն Անոր մէջ կեցողին սիրտը իր բոլոր շարժառիթներով եւ կեանքը իր բոլոր արտայայտութիւններով սուրբ, անբիծ եւ անմեղադրելի կ'ըլլան: Բացարձակ համարձակութիւնը ամբաստիւ խղճի մը բնական դիրքն է թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց առջեւ: Մենք Նոր ուխտի քահանաներս որքա՞ն պէտք ունինք այս հազուագիշտ համարձակութեանը:

դ) Սրբարանին մէջ կենալու պատուէրը չորրորդ պատճառ մըն ալ ունի զոր ամենէն զործնականը ըլլալ կը թուի ինծի: Յովհ. ԺԵ. 4-5ին մէջ մեր մեծ քահանայապետը ինք կ'ըսէ «Իմ մէջս կեցէք... վասնզի առանց ինծի բան մը չէք կրնար ընել»: Յիւրաքանչեւ մեր մեծ քահանայապետին ոչ միայն բան մը չենք կրնար ընել, այլ բոլոր ըրածնիս ալ փնասակար եւ աղիտբեր են: Բայց երբ Անոր օրինակին հետեւելով եւ Անոր հրամանին հնազանդելով կ'ընենք, այն ատեն մեր քահանայական պաշտօնն ու գործունէութիւնը ընդունելի եւ պտղաբեր կ'ըլլան: Քահանայապետին օրդիները սրբարանին մէջ չէին կենար լոկ զմայլելու համար այն սիրովը զոր հայրը իրենց վրայ ունէր, ո՛չ, այլ մանաւանդ տեսնելու այն սէրը եւ ծառայութիւնը զոր քահանայապետը կը ցուցնէր մեղաւոր հոգիներուն, անոնց անուններն ու մեղքը միշտ իր ուսին վերայ կրելով: Մենք, Նոր Ուխտի քահանաներս ալ պարտաւոր ենք միշտ սրբարանին մէջ, մեր մեծ Քահանայապետին առջեւ կենալ: Անոր հետ անխզելի յարաբերութեան մէջ ըլլալ: Անոր նայիլ: Քայլ առ քայլ եւ կէտ առ կէտ Անոր օրինակին ու հետքերուն հետեւիլ: Այդ պարագային յաւիտենական օրհնեալ փոփոխութիւն մը տեղի պիտի ունենայ մեր անձնական կեանքին եւ մեր եկեղեցիներուն մէջ: Քահանայապետի հոգիովը եւ սիրովը պիտի լեցուինք: Անոր, միայն Անոր, լման Անոր պիտի նուիրուինք: Հոգիներու փրկութիւնը մեր մտմտութիւն եւ մեղաւորաց դարձը մեր գործունէութեան միակ նշանակէտը կը դառնայ: Եւ եթէ իրաւ մեր քահանայական կոչումը հաստատ է, մեր աշխատութեան փառաւոր արդիւնքը պիտի երեւնայ: ԲՈՅՐ ՀԵՏՎԻԿ ՊԻԻԼ

ՇՆՈՐՀԱՑ ԾՈՎԷՆ

ԻՆՏԻ ԱԼ ԵՐԵՒՑԱԻ

○○○○○ — ○○○○○

Ամէն մէկը ինչ տեսակ շնորհք որ տուաւ, զանիկա իրարու մատակարարեցէք: Ա. Պետ. Դ. 10

Օրհնեալ ըլլայ Աստուծոյ Որդին Յիսուս, աշխարհի Փրկիչը, որ բերաւ որ հոգիներու երեւնալէն վերջ, ինծի, թշուառ մահապարտիս ալ երեւցաւ, եւ զիս «փրկեց հիմակուան չար աշխարհէն»:

Ս. Հոգին Պետրոս Առաքեալին բերնով մեզ կը յորդորէ մեր աւաճ շնորհքները իրարու մատակարարել: Վստահ ըլլալով թէ Աստուծմէ ընդունած շնորհքներու գերազանցը իմ հոգիիս փրկութիւնն է, կ'ուզեմ զայն ամենուն հաղորդել: Գուցէ «առանց Աստուծոյ եւ առանց յոյսի» ապրողներէն ոմանքը իրենց փրկիչը զանկա այս միջոցով:

Աշխարհ եկած եւ 1893ին Եօզկատի Մէնսիէէզէ գիւղը, լուսաւորչական ծնողքէ: Հայրս եկեղեցւոյ սարկաւազ էր: Ծեսերու, արարողութիւններու եւ եկեղեցական խնդիրներու քաջածանօթ կրօնամուկ մը ըլլալով մէկտեղ, շատ անժուպկալ եւ զեղը կեանք մը ապրած է: Դաժան ըլլալու աստիճան անհամակիր եղած է հոգեւոր ամէն ճշմարիտ շարժումի: Այս զարմանալի չէ. վասնզի, երբ ի սէր աւանդութեան Քրիստոսի փառաւոր լուսարամը մէկդի կը դրուի եւ ճշմարիտ աստուածապաշտութեան տեղը՝ աւելորդապաշտ աւանդամուտութիւնը կը զբաւէ, այն ատեն ամենաանկեղծ հոգիներն իսկ կ'ստորնանան: Առանց Քրիստոսի՝ եկեղեցական ամէն օրինապահութիւն, ծեսերն ու արարողութիւնները մարդը կը դարձնեն կոյր եւ մոլեռանդ, խոտասիրտ եւ նախանձալոյզ:

Այս ազիտաբեր կէտին շուրջ քիչ մը ծանրացայ. որովհետեւ ես ինքս ալ Սատանային այս ցանցէն բռնուած ըլլալով ապաշխարութիւնէս երկար ժամանակ վերջն իսկ, ներքին հակում մը կ'զգայի դէպի այդ կործանարար ճամբան: Առաքեալը այս խնդրոյն շուրջ կը յորդորէ մեզ հետեւեալ խօսքերով, «Ինքզինքնիդ ազատեցէք այս խոտորեալ ազգէն եւ ձեր հայրերէն աւանդուած ունայն ճամբաներէն» (Գործ. Բ. 40 եւ Ա. Պետ. Ա. 18):

Հայրս մեռաւ եւ ես եղբօրս հետ որը մնացի:

Մայրս անկարող մեզ երկուքս ալ պահելու, ըստիպուած եղաւ մէկուն քով ծառայութեան մը տանել:

Մեր գիւղին մէջ բաւական թուով բողոքականներ կային: Այս անունը կուտայինք ապաշխարութեամբ փրկութեան հասնող բոլոր Աստուծոյ զաւակներուն: Շատ կը փափաքէի այս հոգեւորներուն եկեղեցական սովորութիւնները տեսնել եւ անոնց քարոզները լսել: Փափաքիս հասնելու համար ժամանակներս յարմարցուցի եւ գացի: Այնքան զբաւեցեալ Աստուծոյ խօսքին պարզ մատակարարութեանն եւ հոն տիրող երկնային մթնոլորտէն, որ ամէն ժամանակ զանելու սկսայ յաճախել: Մեծ տարբերութիւն գտայ մեր աւանդապահ եկեղեցիներուն եւ այս անկեղծ հաւատացեալներուն ժողովաւորիին մէջ: Երբ միտքս ճշմարտութեամբ լուսաւորուեցաւ, տեսայ որ մեր եկեղեցիները «Աստուծապաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են» (Բ. Տիմ. Գ. 5): Մինչդեռ այս հոգեւորներուն ժողովներուն մէջ Աստուծոյ զօրութիւնը յայտնապէս ներկայ էր բոլորեւ եւ փրկիչը այն ամէն մեղաւոր հոգիները որ անկեղծութեամբ Աստուծոյ (Ղուկ. Ե. 47):

Հոն տրուած պատգամներէն ես ալ ազդուած եւ լուսաւորուած՝ որոշ չափով արթնութիւն ունեցայ: Դժբաղդաբար, մէկ կողմէն հայրենական եւ եկեղեցական աւանդութիւնները այնքան խորարկատ տեղ բռնած էին մէջս եւ միւս կողմէն այնքան անկարելի եղաւ այդ օրհնեալ ժողովներուն յաճախել որ մէջս եղած լոյսն ալ մարեցաւ եւ ես թաղուեցայ աւելի թանձր խաւարի մէջ:

Այդ օրերուն մէջ հօրմէս ինկած ժառանգութեան շուրջ սաստիկ վէճ մը ունեցայ ինծի մօտ ազգական եղող քահանայի մը հետ, որ իմ իրաւունքս կ'ուզէր անիրաւել: Սաստիկ ջղազրգոտած, ամենաազատ լուսանքներով վարկաբեկեցի զայն: Հիմա կը յիշեմ այդ տխուր պարզան եւ սաստիկ կը տրամբի ու կ'ամօշնամ: Աստուած իմ, կ'ազգակեմ երբեմն, ինչպէ՞ս կարելի է լուսաւորուել եւ արթնալէ վերջ դարձեալ այդքան ցած իյնալ:

Յետ այնու թէեւ միշտ կ'աղօթէի եւ կրօնասէր էի, նոյնիսկ անվրէպ պահքս եւ ծոմս կը պահէի, բայց հարկաւոր պարագաներուն ալ բոլոր ազատութիւնով մեղք կը գործէի: Միշտ կ'ուզէի ինքզինքս համոզել թէ այսպէս եկեղեցւոյ պարտադրած օրէնքները պահելով պիտի

կրնամ Աստուծոյ հաճելի ըլլալ եւ երկինք մտնել: Բայց խիղճս այդպէս չէր վկայեր ինծի: Հակառակ այդ սեղմ օրինաւորութեանս սիրտս միշտ խոռոված էր եւ խաղաղութեան կարօս: «Պէտք էր ինծի նորէն ծնանիլ»:

Տարիքս հասած ըլլալով՝ զինուորութեան կանչուեցայ: Մեծ եղեռնին, Տէրը, հակառակ իմ անօրէնութիւններուն, զիս պահեց եւ խնամեց: Զինադադարին զիւր վերադարձայ յուսալով որ կիսն եւ ազգականներս կրնամ գտնել: Կիսն թուրքի մը հետ ամուսնացած ըլլալով չուզեց անկէ հրաժարիլ: Այս պարագան խիստ ծանր թուեցաւ ինծի: Բայց երբ լըջութեամբ սկսայ խորհիլ, տեսայ իմ գիրքս՝ ալ առ Աստուած նոյնքան զարմանալի էր, որ հակառակ Անոր սիրալիր հրաւերին, չէի ուզեր Սատանայէն եւ մեղսալից կեանքէն հրաժարիլ:

Աւելի երկար չէի կրնար գիւղ մնալ: Զգեցի տեղս եւ էնկիւրիւ անցայ, անկէ ալ Ատանա: Հոս երկրորդ անգամ ըլլալով գաղթական կնոջ մը հետ ամուսնացայ 1923ին: Կնոջս հետ Պօլիս գացի, յետոյ Պուլկարիս, եւ հոնկէ ալ Յրանսա մտայ, միշտ առանց ունէ հոգեւոր փոփոխութեան: Մարսիլիոյ շրջակայքը Պուլկար Օտտօի գաղթականները հաստատուեցայ: Ամէն կիրակի որ գործ չունենայի, տեղւոյս լուսաւորչականաց մատուռը կ'երթայի արարողութեան ունկնդրելու: Շատ մեղքեր կային որոնք զիս կը խղճահարէին, բայց Տէրունական սուրբ օրը պղծելը ինծի երբեք խղճահարութիւն չէր պատճառեր: Լման կոյր էի:

Օր մը գաղթականայնիս մէջ հանդիպեցայ քանի մը հոգիներու որոնք հաւաքուած էին ժողով ընելու: Զանոնք դիտելու մտք մօտեցայ անոնց: Երբ տեսայ որ Աստուածաշունչ կը կարդան, ես ալ շատ լըջութեամբ մտիկ ըրի: Ծննդ, հինգերորդ գլխուն 27րդ համարը կարդացուեցաւ, «Եւ լրաժողովոյ թուր օրերը ինը հարիւր վաթսուներ ինը տարի՝...: Ըսել է որքան երկար կ'ուզէ թող ապրի մարդ, բայց վերջապէս պիտի Մեռնի: Եւ վերջը ՈՒՐ...: Այս էր խորհրդածութիւնը որ այս համարէն կը բղխէր: ԲԱՅՅ ՎԵՐՋԸ ՈՒՐ:

Գարեգին եղբայրն էր այդ պատիկ ժողովին նախը: Ինծի դառնալով ըսաւ, «Լեւոն աղբար, ինչո՞ւ մեր ժողովներուն չես յաճախեր: Այս կէս օրէն վերջ նորէն հոս պիտի հաւաքուինք, դուն ալ եկուր, մի մոռնար»: Բանի մը անգամ ներկայ գտնուեցայ ժողովներուն: Այդ պարզ մար-

դուն խօսքերէն գրաւուեցայ: Ճիշդ չեմ յիշեր, ինչպէ՞ս եւ ո՞ր օրը տեղի ունեցաւ վերստին ծրնունդս, բայց միայն գիտեմ թէ այդ օրերուն մէջ բոլորովին յաղթուած եւ խղճահար Տէր Յիսուսի յանձնուեցայ եւ Անկէ ընդունուեցայ: Փա՛ռք Անոր, որ Իրեն եկողներէն բնաւ մէկը չի մերժեր:

Այս եղաւ: Եւ անկէ վերջ զարմանալի փոփոխութիւն մը եղաւ կեանքիս մէջ: Այդօրքի, Աստուծոյ խօսքին եւ Աստուծոյ զաւակներուն հետ հաղորդակցելու մեծ ծարաւ մը սկսայ զգալ սրբտիս մէջ: Սաղմոսերգուն փորձառութիւնը ունեցայ որ կ'ըսէ, «Ինչպէս եղջերուն ջուրի վրտակներուն կը փափաքի, այնպէս ալ իմ անձս Բեզի կը փափաքի ու Աստուած...: Հոգիս կը թափեմ իմ ներսիդիս, փափաքելով որ բազմութեան հետ երթամ, անոնց հետ հանդէսով Աստուծոյ տունը մտնեմ» (Սաղ. 103, 4-5):

Մինչեւ այդ ատենները ինչպէս ըսի, կիրակի օրերը աշխատիլ ինծի երբեք խղճահարութիւն չէր պատճառեր: Բայց երբ շաբաթ իրիկուն շէֆս ինծի առաջարկեց որ կիրակի օրը երթամ աշխատիմ, Տէրոջս գորութիւնովը պատասխանեցի, — Ոչ, ասկէ վերջ կիրակի օրերը չեմ կրնար աշխատիլ: Երկար պիտի ըլլար շէֆսս հետ ունեցած խօսակցութիւնս հոս դնեմ: Միայն թէ այդ պահուն սա խորհուրդը զիս զօրացուց, — կրնայ ըլլալ որ շէֆս բարկացնելով գործէս զըրկուիմ, բայց իմ Աստուածս կարող է ինծի ուրիշ գործ մը տալ կիսն եւ զաւակներս ապրեցնելու համար. բայց եթէ իմ Աստուածս բարկացնեմ, գործիս հետ մէկտեղ անշուշտ հոգիս ալ յաւիտեան պիտի կորսնցնեմ: Նոյն պահուն Ս. Հոգին յիշեցուց ինծի իր խօսքերը, «Լաւ է Տէրոջը յուսալ քան թէ մարդոց ապաւինիլ... մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել... առաւել Աստուծոյ հաւանդելի պէտք է քան թէ մարդոց»: Յաջորդ շաբաթ իրիկուն դարձեալ առաջարկուեցաւ որ կիրակի գործի երթամ: Դարձեալ Տէրոջը օգնութեամբը «Անկարելի է» պատասխանեցի: Այսպէս քանի մը անգամ պատահեցաւ: Բայց երբ շէֆս տեսաւ որ Աստուծոյ ապաւինելով հաստատ կը մնամ որոշումիս մէջ, ա՛լ ինծի չառաջարկեց կիրակի օրերը աշխատիլ: «Երանելի է այն մարդը որ փորձութեան կը համբերէ, վասնզի եթէ փորձութեամբ ընտիր գտնուի, կենաց պսակը պիտի առնէ, զոր Տէրը գինք սիրողներուն խոստացաւ» (Յակ. Ա. 12):

Ապաշխարութենէն քիչ վերջ Փրկչին սէլը զիս նուեր ստիպողական փափաքով մըն

ալ լեցուց, այն ալ անմահ հոգիներուն փրկութեան խորհուրդն էր: Այս մեծ փափաքս ալ լեցնելու համար ունէ առիթ չեմ կորսնցնէր: Գործէս զառնալէս վերջ պարապոյ ըլլոր ժամերս նուիրած եմ այցելութիւններու եւ ժողովներու: Գոհութիւն Աստուծոյ որ մեզի վստահութիւն կու տայ թէ հոս իր փառքին համար թափած մեր բոլոր ջանքերուն օրհնեալ արդիւնքը յաւիտենականութեան մէջ պիտի վայելենք Քրիստոս Յիսուսով:

— Ով Հայր, ինծի շնորհք տուր որ Քու խօսքիդ յորդորանքին համաձայն, Քու Որդւոյդ Յիսուս Քրիստոսի մէջ կենամ միշտ, որպէսզի երբ Անիկա յայտնուի, ես ալ սուրբերուդ հետ համարձակութիւն ունենամ ու Անկէ չամչնամ Իր զալու ատենը: Ա. Յովհ. Բ. 28:

Քրիստոսով Ձեր Զինուորակիցը
ԼԵՒՈՆ ԳԱՅԱՆԱՆ

ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՄԱՔՍԱԽՈՐԻՆ ԱՂՈԹՔԸ

Արդարացած իր տունը իջաւ, Ղուկ. ԺԲ. 14

Բայց ողորմութիւն գտայ, Ա. Տիմ. Ա. 13

Հարաւային Ամերիկայի մէջ հաստատուող Դանիացի կալուածատէր մը, իր ծառայութեան մէջ առած էր տեղացի սեւամորթ մը: Այս ծառային մէջ տակաւ առ տակաւ ճշմարիտ Աստուածը գտնելու փափաքը այնքան մեծցաւ, որ ներքնապէս սկսաւ տառապիլ: Անպայման պէտք էր զԱստուած գտնել:

Առաւօտ մը, երբ իրենց սովորութեան համաձայն, ամբողջ տունը հաւաքուեցաւ ընտանեկան աղօթքի, կալուածատէրը բացաւ իր մեծ Ս. Դիրքը եւ սկսաւ Ղուկասու Աւետարանին ԺԲ. գլուխէն կարդալ. — «Երկու մարդ ելան տաճարը աղօթք ընելու, մէկը փարիսեցի ու միւսը մաքսաւոր»:

Ափրիկեցին բոլոր ուշադրութեամբ մտիկ կ'ընէր եւ ինքնիքենը ըսաւ, «Հիմա այս երկու մարդոց աղօթքը լսելի պիտի սորվիմ շիտակ աղօթել»:

Կալուածատէրը կը շարունակէր իր ընթերցումը, — «Փարիսեցին կայնէր էր ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր, ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող...»:

— Օ՛հ, ոչ, ես ամենէն աւելի գէշ եմ միմեջեց սեւամորթը:

...Հապա շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ ու բոլոր ստացուածքիս տասանորդը կուտամ:

— Բայց այս վերջին նախադասութիւնը չեմ կրնար ըսել, միմեջեց սեւամորթը ինքնիքեն, ես ոչ ծոմ կը պահեմ, ոչ ալ տասանորդ կուտամ: Ես չեմ կրնար փարիսեցիին աղօթքը ընել:

Կալուածատէրը միշտ կը շարունակէր իր ընթերցումը, — Եւ մաքսաւորը հեռուն կայնած...

— Այդ ես եմ, այդ ես եմ, ընդհատեց սեւամորթը, հեռո՛ւն, Աստուծո՛մէ հեռո՛ւն, ահա իմ դիրքս:

...Ու չէր ուղեր աչքն ալ երկինք վերցնել:

— Ոչ ալ ես, աւելցուց սեւամորթը խոնարհութեամբ, «Ես այնքա՛ն գէշ մեղաւոր մըն եմ որ աչքերս առ Աստուած վերցնելու իսկ արժանի չեմ»:

...Հապա իր կուրծքը ծեծելով:

— Այո, այո, պէտք է որ ես ալ իմ կուրծքս ծեծեմ» շարունակեց սեւամորթը, սաստիկ յուզուած, եւ սկսաւ իր կուրծքը բռնցկահարել:

...Կ'ըսէր, Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս:

Մաքսաւորին այս վերջին բառերը լսելով, սեւամորթը աղաղակեց, Ահաւասիկ իմ աղօթքս, այո, այս իմ աղօթքս է: Ու սաստիկ խոռված սրտով շարունակեց իր կուրծքը ծեծել եւ աղաղակել, «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս»:

Եւ Աստուած, որ մեծ է ողորմութիւնով, լսեց այս սրտաբուլի աղօթքը:

Քանի մը օր վերջ, սեւամորթը հաւատացեալ այցելուի մը կողմէ Աւետարանի քարոզութիւնը լսեց: Լսեց ձրի փրկութեան շուրջ, թէ ինչպէս «Մեղքին վարձը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք է մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով»: Եւ կատարեալ համոզմամբ հաւատաց թէ «Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը զինք (ամենամեծ մեղաւորը) ամէն մեղքէ կը սրբէ» (Հոով. Զ. 25, եւ Ա. Յովհ. Ա. 7):

Սիրելի անապաշխար ընթերցող, գուցէ դուն վերը յիշուած հեթանոս սեւամորթին պէս աղտոտ եւ անառակ մէկը չես: Գուցէ քարոյականութեան եւ անձնական արդարութեան վերաբերուով մըն

ալ ինքզինքդ ծածկած ես: Ինչ որ ալ ըլլայ, տա-
կաւին մեղաւոր մըն ես (Սաղ. ԾԱ. 3): Եւ եթէ
այդպէս է, ուրեմն Մաքսաւորին եւ այս ափրի-
կէցի սեւամորթին պէս քաւութեան եւ մեղաց
թողութեան պէտք ունիս: Քու մեղքերդ թող-
ուած են (Ա. Յովհ. Բ. 12): Թող քու խիղճդ պա-
տասխանէ այս կենսական հարցումին: Յիսուս
Քրիստոսի արինը քեզ ամէն մեղքէ սրբած է:
Առաքելին պէս կրնա՞ս ըսել թէ «Բայց ողոր-
մութիւն գտայ»: Տէր Յիսուս զղջումով առ Աստ-
ուած դարձող մաքսաւորին համար ըսաւ թէ
«արդարացած իր տունը իջաւ»: Սեւամորթն ալ
ողորմութիւն եւ փրկութիւն գտաւ: Ես ալ վըս-
տահութեամբ եւ ուրախութեամբ կը վկայեմ
թէ ողորմութիւն գտայ: Իսկ դո՞ւն:

Վստահ եղիր որ եթէ ուզես, ճիշդ հիմա քու
մեղքերովդ կրնաս Փրկչիդ յանձնուիլ ու հա-
ւատքով թողութեան եւ փրկութեան տիրանալ:
Եթէ ուզես կրնաս ճիշդ հիմա ինծի հետ եր-
գել:—

Փրկիչն ցուցուց ողորմութիւն
Ինձ մեղաւոր արարածիս:
Ինծի յայտնեց Իր սէրն անհուն,
Որ զըժոխքէն փրկէ հոգիս:
Այս տեսնելով կ'ուրախանամ,
Ողորմութեանն ալ փառք կուտամ:
Ես բարկութեան արժան որդի,
Տէր Յիսուսէն շնորհք զըտայ:
Ինք բաժանող պատը քակեց,
Եւ ես Տէրօջ հետ միացայ:
Ո՞վ կատարեց այս գթութիւն,
Ողորմութիւն, ողորմութիւն:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Հա Սիօթա

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՓԵՏՐ. 2.—

ՅԻՍՈՒՍ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ԿԸ ԿԱՆՁԷ

Դաս Ղուկ. Ե. 1-11, 27, 28

Կարգալ Եսայ. ԿԲ. 6-12

Յիսուս հոս մարդոց որսորդ ըլլալու առաջին
դաս մը եւ օրինակ մը կուտայ Պետրոսի եւ ա-

նոր ընկերներուն: Ահաւասիկ քանի մը կէտերը
այդ դասերէն:

1. Ժողովուրդը... դիզուեցաւ: Ասիկա անհրա-
ժեշտ է Աւետարանին քարոզութեան համար:

2. Կամ Յի խոստումը հաւատացեալներու ա-
ղօթածողովի համար է: Բայց Աւետարանին քա-
րոզութեան ատեն անհրաժեշտ է երբեմն միջոց-
ներ գործածել ժողովուրդը համախմբելու համար:
Այդ միջոցներէն երկու հատ յիշենք (ա) Սուրբ
Հովնայն հեղումը, Գ. Առաք. Բ. 6: (բ) Հիւանդնե-
րու հրաշքով բժշկութիւնը (Ղուկ. Դ. 42, Գ. Առաք.
Գ. 11): Անշուշտ այս միջոցները գործածել Տէրօջը
կը վերաբերի, Բայց Տէրը զանոնք մեր տրամադ-
րութեան տակ դրած է աղօթքով՝ այնքան ա-
ռատ եւ ազատ խոստումներով որ իբր թէ մենք
ըլլայինք այդ միջոցները գործածողը:

3. Ժողովուրդը Անոր բոլորտիքը դիզուեցաւ:
Օր մը պիտի գայ երբ Յիսուս տիեզերքի պաշ-
տամունքի կեդրոնական Անձը պիտի դառնայ:
Բայց հիմա ալ թէեւ խաչուած ու անարգուած՝
Յիսուսն է որ կը հրապուրէ ժողովուրդը ամէն
ուրիշ միջոցներէ աւելի:

5. Ժողովուրդը... Աստուծոյ խօսքը լսելու հա-
մար դիզուեցաւ (Մարկ. Բ. 2):

4. Ժողովուրդին նախ Աստուծոյ խօսքը սոր-
վեցնելու է հ. 3:

5. Տեղ մը աւետարանչական ժողովներ սկը-
սելու համար լաւ է նախ Պետրոսի մը կամ Յով-
հաննէսի մը տունը (նաւակը) փնտռել եւ հոն
սկսիլ:

6. Փրկուելիք հոգիներէն ծառայութիւն խնդ-
րել հ. 3:

7. Փրկուելիք հոգիները աւելի խորունկը ա-
ռաջնորդել հ. 4:

8. Քարոզէն յետոյ անհատական տեսակցու-
թիւն ունենալ փրկուելիք անձերուն հետ հ. 8:

9. Ըլլայ ձկնորս Պետրոսի կամ մաքսաւոր Ղե-
ւիի համար՝ աշակերտութեան պայմանը նոյնն է.
«Ամէն բան թողուցին եւ Անոր ետեւէն գացին»:
հ. 11 եւ 28:

ՓԵՏՐ. 9.—

ՅԻՍՈՒՍ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԱՆ ՎՐԱՅ ԿԸ ԾԱՆՐԱ-
ՆԱՅ

Դաս Ղուկ. 2. 39-49

Կարգալ Գ. Առաք. Գ. 13-18

Այս դասին մէջ Յիսուս հոգեւոր հիմնական
սկզբունքներու վրայ կը խօսի:

1. ՀԻՔԵՆՈՐ լոյս հ. 39: Անհրաժեշտ է հոգեւոր

առաջնորդութեան եւ հոգեւոր ապահովութեան համար: Առանց լոյսի կարելի չէ ճշմարտութեան մէջ քալել: Առանց լոյսի (ներքին լոյս, աչք) մարդ չի կրնար կործանումի (փոսը ինչալ) առաջը առնել:

2. Հոգեւոր դիրք հ. 40: Միշտ Յիսուսի աշակերտ մնալ, որպէսզի հոգեւոր հպարտութեան վտանգին մէջ չիյնանք: («Հոգեւոր հպարտութիւն» բառերը գործածեցինք, որովհետեւ հաւատացեալներու մէջ սովորական ոճ մը դարձած է այս: Հոս տեղն է ըսել թէ հպարտութիւնը հոգեւոր չի կրնար ըլլալ, հապա կ'ըլլան հոգեւորներ, որոնք հոգեւորութենէ մոլորելով հպարտութեան մեղքին մէջ կ'իյնան):

3. Հոգեւոր օրինակ, հ. 40: Միշտ Յիսուսի միտքը ունենալ եւ Յիսուսի նմանող կեանքի մը յարաճուն ծարաւ ունենալ: Ասիկա կենսականօրէն անհրաժեշտ է հոգեւոր աճումի համար:

4. Հոգեւոր խոնարհութիւն, հ. 41: Իր անձնական տկարութիւններուն գիտակից ըլլալով:

5. Հոգեւոր անկեղծութիւն, հ. 42: Մեր անձնական տկարութիւններն ու մեղքերը աւելի պէտք է քննադատենք քան թէ դիմացինինը: Եւ այսպիսի պատուաւոր հոգեւորութիւնը մեզ կը պահէ հոգեւոր հակասութենէ եւ հոգեւոր կեղծաւորութենէ: (Հոս կը կրկնենք թէ «հոգեւոր բառը չվայլեր իբրեւ ածական, ոչ հակասութեան, ոչ կեղծաւորութեան»):

6. Ճշմարիտ հոգեւոր կեանք, հ. 43-45: Ճշմարիտ հոգեւոր կեանքի տիրացողը հոգեւոր պտուղներ կ'ունենայ, իսկ անկէ պակասողը անպտուղ կ'ըլլայ եւ կամ փոսակար պտուղներ կ'ունենայ: Ճշմարիտ հոգեւոր կեանք ունենալին կամ չունենալին մեր լաւ կամ գէշ պտուղէն կը յայտնուի: Ճշմարիտ կեանքի տիրացումը անձնական եւ ներքին գիտակցութեամբ է, հ. 45:

7. Հոգեւոր հնազանդութիւն, հ. 46: Առանց ասոր հոգեւոր կեանք ունենալ անկարելի է:

8. Հոգեւոր հիմն, հ. 47-49: Զայս ալ կարելի է հետեւեալ կերպով բաժնել.—

ա) Հոգեւոր հիմին փաստը Քրիստոսի (Աստուծոյ) խօսքին հնազանդիւն է, Յակ. Ա. 22:

բ) Հոգեւոր հիմին արժէքը հ. 48, փոթորիկին, փորձութիւններուն կը տակաւ:

գ) Հոգեւոր հիմին տուականութիւնը, հ. 48, վէժ, անշարժ, հիմ:

դ) Հոգեւոր հիմին իմաստութիւնը, հ. 48, կը տողայ, չշարժիր:

ե) Հոգեւոր հիմին չգոյութիւնը, հ. 49, Ասոր փաստը Քրիստոսի (Աստուծոյ) խօսքին ան-

հնազանդ ըլլալն է: Ասոր յիմարութիւնը կը տեսնուի փոթորիկի, փորձութեան ատեն կործանուելով: Այս կործանումը մեծ (սուղի նշատած) եւ կորուստը, փաստը շատ մեծ էր ու նաեւ յաւիտեանական կորուստ մ'էր:

ՓԵՏՐ. 16.—

ՅԻՍՈՒՍ ԿԱՍԿԱԾՈՂ ՀՈԳԻԻ ՄԸ Կ'ՕԳՆԷ:

Դաս Ղուկ. է. 19-28

Կարդալ Եսայ. ԼԵ. 5-10:

Հմր. 19, ...Զանոնք Յիսուսի դրկեց: Յիսուս ըսաւ «Ես եմ ճամբան», բայց Յովհաննէս Տէրոջը ճամբան պատրաստելու եկաւ: Յիսուս ըսաւ, «Ես եմ Լոյսը», բայց Յովհաննէս եկաւ որպէսզի Լոյսին համար վկայէ: Յիսուս ըսաւ, «Ես եմ բարի Հովիւ», Յովհաննէս ղոնապանն էր որ ղուռը բացաւ: Յովհաննէս այս երեք բաները ըրած եւ իր գործը վերջացուցած էր: Ինք պէտք էր պատիկնար եւ Յիսուս մեծնար: Երբ արեւը կ'ելլէ, լուսինը եւ աստղերը կ'անհետանան:

Հմր. 20, Գուն Կ'Ա. Ես: Հարցուցէք Եսայիէն (Եսայ. ԽԲ. 1-8, ԾԳ. 1-12), հարցուցէք Պետրոսէ (Մատթ. ԺԶ. 16), հարցուցէք Փիլիպպոսէ (Յովհ. Ա. 45), յիշեցուցէք Յովհաննէս Մկրտիչին իր իսկ տուած փառաւոր վկայութիւնը Յիսուսի վրայով (Յովհ. Ա. 29-34):

Հմր. 21, Դոյն ժամուն: Այս մարդիկը անկեղծ հոգեւորներ էին եւ Յիսուսի քով անկեղծ հարցումով մը եկած էին, եւ ոչ թէ Յիսուսի թշնամիներուն նման: Յիսուս անկեղծ կասկածողներուն գոհացում կուտայ, ինչպէս հոս՝ Սատանայի եւ անոր թաղաւորութեան վրայ իր իշխանութիւնը ցուցնելով:

Հմր. 24, Յիսուս սկսաւ ժողովուրդներուն ըսել Յովհաննէսի համար .. Եղէ՞ք մը... Յովհաննէս ամէն հովէ ծռելիք եղէ՞ք մը չէր, հապա զօրաւոր վստահութեանց անխախտելի կոթող մը: Յիսուսի այս խօսքը արդէն կը հերքէ այն շատ մը ենթադրութիւնները որով կարգ մը մեկնիչներ Յովհաննէսը մեծ թերահաւատութեամբ եւ այլն կ'ամբաստանեն՝ անոր Յիսուսի զրկած հարցումին համար:

Հմր. 25, Փափուկ հանդերձներ հազած մալիք մը: Ո՛չ, հապա անձնուրացութեան բացառիկ օրինակ մը. մէկը որ կ'առէր Մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը»:

Հմր. 26, Մարգարէ: Յովհաննէս ծնունդով քահանայ էր, բայց Աստուածային կարգադրու-

թեամբ քահանայութեան փառքէն մարդարէութեան փառքին անցաւ: Աստուծոյ առջեւ մարդարէն թագաւորէն իսկ մեծ էր. Յովհաննէս նոյն իսկ մարգարէներէն ալ մեծ եղաւ:

Հմր. 28, Աստուծոյ Թագաւորութեան մէջ ամենէն պզտիկը անկէ մեծ է: Բոլոր մարգարէները, Յովհաննէս Մկրտիչն ալ մէջը ըլլալով՝ Իսրայէլի թագաւորութեան կը պատկանէին. թագաւորութիւն մը որ սահմանափակ էր, փոփոխական, տկար, սխալական եւ մահկանացու թագաւորներով: Բայց Աստուծոյ թագաւորութիւնը յաւիտեանական է եւ անշարժ. Անոր թագաւորը խաղաղութեան Իշխանն է, յաւիտենականութեան Հայրը, Հիւսիսուրբը: Այս պատճառաւ Աստուծոյ թագաւորութեան մէջ ամենէն պզտիկը Իսրայէլի թագաւորութեան մէջ եղած ամենէն մեծերէն (Դաւիթ, Սողոմոն, Յովհաննէս Մկրտիչ) աւելի մեծ է: Տես Բ. Կոր. Գ. 9:

ՓԵՏՐ. 23.—

ՄԱՐԴԴ. ՍՏԱՅՈՒԱԾԻԷՆ ԱՌԱՋ

Դաւ. Դուկ. Ը. 26-37: Կոր. Ա. 9-18

Կարգալ Մատթ. Զ. 25 եւ ԺԶ. 26

Հմր. 37. Գաղարացւոց շրջակայ տեղերը գրաւուող բոլոր բազմութիւնը թէեւ ամէնն ալ մեր դասին նիւթը կազմող զիւահարին պէս չէին, բայց ամէնն ալ քիչով կամ շատով Սատանային միաքը ունէին: Վասնզի Սատանայ կը նախընտրէ խողերը կշտացնել եւ հոգիները սովամահ ընել: Տես նաեւ Դուկ. ԺԵ. 16: Եւ այս մարդիկն ալ փոխանակ զիւահարին վրայ եկած փոփոխութեանը համար ուրախանալու ու խոզերուն կորուստին վրայ ցաւելով՝ Յիսուսը իրենց մէջ հետեւ կը զրկեն: Մենք զիւահարը Յիսուսի մտքով եւ տեսակէտով սերտելով զայն 3 կողմէ կը տեսնենք:

1. Հմր. 27-29, Անոր Խշուուս վիճակը. —

ա) Անիկա զիւահար էր, բաղդ. Յովհ. Ը. 34, Տիմ. Գ. 3, Եփես. Բ. 1-3:

բ) Անիկա մերկ էր մարմնով եւ հոգեով, բղդ. Գ. 7, Յայտ. Գ. 17, 18:

գ) Անիկա զերեզմաններու մէջ կը բնակէր, բաղդ. Թուոց ԺԺ. 16, Եփես. Բ. 1-3, Ե. 3-6, Մատթ. ԻԳ. 27, 28:

դ) Անիկա մտքով խանգարուած էր, բաղդ. Եփես. Գ. 18, Դուկ. ԺԵ. 17:

ե) Անիկա ինքզինքը կը չարչարէր, (Մարկ. Ե. 5) բաղդ. Գաղ. Զ. 7, 8:

զ) Անիկա ուրիշներուն ալ փաստակար էր եւ անգուսպ էր, բաղդ. Ա. Պետ. Գ. 4:

2. Հմր. 30-35, Անոր ազատումը. —

ա) Անիկա Յիսուսի հանդիպեցաւ, բաղդ. Յով. Գ. 14-17, Դուկ. ԺԺ. 10, Ա. Տիմ. Ա. 15:

բ) Յիսուս Իր խօսքով դեւը հանեց բաղդ. Եբր. Գ. 12: Հոով. Ա. 16, Յովհ. Ե. 24-25:

գ) Ազատումը կատարեալ եւ յայտնի էր, խաղաղութիւն՝ բաղդ. Մատթ. ԺԱ. 28, Հոով. Ե. 1, հապուած՝ Բ. Կոր. Ե. 21, Ա. Կոր. Ա. 30, խելքը վրան՝ Գ. Առաք. ԻԶ. 18, Կոր. Ա. 15, Յովհ. Ե. 24, Բ. Կոր. Ե. 17:

3. Հմր. 38, 39, Այս ազատումին հետեւանք. ները. —

ա) Անիկա փափաքեցաւ որ Յիսուսի հետը մնայ, Ա. Յովհ. Գ. 19:

բ) Անիկա Յիսուսի համար վկայեց հոն ուր Յիսուս յարմար կը սեպէր: Անիկա Յիսուսի հնազանդեցաւ: Շատ մը հաւատացեալներ կ'ուզեն վկայել Յիսուսի համար, եւ կ'ուզեն վկայել շատ եռանդով ու թերեւս ալ տաղանդով, բայց կ'ուզեն վկայել իրենց ուզած կերպով եւ իրենց փափաքած տեղերուն ու ժողովներուն մէջ, նոյն իսկ երբեմն տեղւոյն հովիւին անհնազանդ գրտնուելով: Բժշկուած զիւահարին հնազանդութենէն դաս առնենք, բաղդ. Հոով. Զ. 11-15: ԺԲ. 1: Ա. Պետ. Գ. 15:

Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ձԱՆ ՈՒԷՍԼԻ

— o p o —

Մեթոտական եկեղեցին իր սկզբնաւորութեան օրերուն տեղական միսիոնարական եկեղեցի մը եղաւ ու կրնանք ըսել նաեւ Պենտեկոստէի օրերուն յաջորդող առաքելոց օրերու եկեղեցւոյն շատ նմանող եկեղեցի մը: Հալածանքը ոչ միայն Ուէսլիի եւ իր գործակից աւետարանիչներուն համար էր, հապա յաճախաւ Մեթոտական եկեղեցւոյն անդամակցող կամ համակրող իւրաքանչիւր անհատի համար, թէ՛ այրերու եւ թէ՛ կիներու հանդէպ: Ուէսլի եւ իր հիմնած եկեղեցին խաչեալ Բրիտանոսի հետ խաչին չարչարանքներուն մասնակցող եւ խաչին տակը ապրողներ եղան: Եւ Մեթոտական եկեղեցւոյ պատմութիւնը ուսումնասիրելու մեր ջանքը:

քին մէջ մեզի համար ամենաշահեկան կէտը այդ եկեղեցիին ներկայ 10 միլիոնէ աւելի անդամներուն աշխարհածաւալ մեծութիւնը սերտել եւ հիանալուն մէջ չէ որ կը կայանայ, հապա աւոր հիմնադիրներուն Քրիստոսաման եւ մանաւանդ խաչեալ Քրիստոսի նմանող կեանքերուն մէջ, սկսեալ Ճան Ուէսլիէն մինչեւ Քինկզփուտի ամենայեալին հանքադործը եւ կամ Քօնուայի ամենապարզ գիւղացին:

Վեր. Մատթէոս Լըլիէփը լաւագոյն կենսագիրներէն մին հետեւեալ կերպով կը պատմէ ու կը նկարագրէ Ուէսլիի օրագրութենէն անոնց մէկ տարուան 1744ի ընթացքին կրած չարչարանքները: «Երկրին ամէն կողմերէն մեթոտականներուն դէմ ժողովրդային զրգուժման կազմակերպութեցան: Այլեւս միայն անոնց տունները քանդել եւ թալլելով չէին բաւականանար, հապա սկսան անոնց անձերուն դէմ ալ յարձակում գործել, (բազմ. Յոր. Ա. 11, 12 եւ Բ. 4-6): Քարոզիչներէն մին ծանրապէս վիրաւորուեցաւ, ուրիշ մը գրեթէ խեղդամահ ըլին զայն գետին մէջ թաղելով: Խուժանին հետ իրենց հանդիպումներուն մէջ այս բարեպաշտ ծառաները ինքզինքնին շատ երջանիկ կը սեպէին երբ առանց վիրաւորուելու ու միմիայն հազուադէպ բզիկ բզիկ եղած եւ վրանին ցեխով ծածկուած կ'ազատէին: Նոյնիսկ Սթէֆօրտշայրի քանի մը քաղաքները շատ մը անհոգիներ խռովութեանց եւ խռովարարներու ձեռքը մնացին: Տարլամթօնի մէջ խեղճ անպաշտպան կիները բռնադատուեցան: Ուսուցիչ խուժանը պաշտօնական բանակ կազմեց Մեթոտականներու դէմ պատերազմելու: Անոնք զրօշակ մը շինելով հանրածանօթ հրապարակի մը վրայ տնկեցին եւ յարձակումներու պահուն իրենց առջեւ կը ծածանեցնէին: Այն տունները որոնց համար Մեթոտականները ներս առած ըլլալու կտակածը կ'արթննար, թալանի կը տրուէին: Անկլիքան եկեղեցւոյ պաշտպանները թալլուած կահ կարասիքին մէկ մասը իրենք կ'առնէին եւ մէկ մասն ալ կտոր կտոր կ'ընէին: Անաստական կիրքերու այս չափազանց յորդումին մէջ մարդիկ եւ կիներ կ'փախչէին, առանց գիտնալու թր ուր պիտի ապաստանէին: Անոնց հաստատումիտ յարատեւութիւնը եւ հաստատումութիւնը գնայլիկի եղաւ: Երբ անոնց առաջարկ եղաւ որ եթէ իրենց քարոզիչները տուններին չընդունէին գանձաքաղ տուր պիտի թողուին, անոնք պատասխանեցին, «Մենք մեր բոլոր ստացումները կ'որոնցուցինք, կը մնայ կորսնցնել մեր կեանքն ալ, եւ կը նախընդունք զայն յօժարակամ զոհել,

քան թէ մեր խղճին դէմ գործել»: Ցաւալի է ըսել որ շատ անգամներ կղերականներն ալ կը զրգոնէին խուժանը: Այն օրերուն սովորական դարձած էր կարգ մը բեմերէ Մեթոտականները «եկեղեցւոյ թշնամիներ, մոլորեցնողներ, խռովարարներ, դպիրներ, փարիսեցիներ եւ կեղծաւորներ» կոչել: Ուէսլի քաջատուելին այսչափով ալ չբաւականանալով կը զոչէր թէ Մեթոտականներուն դէմ ոչ թէ փաստերով հապա բռնեցքով հարկ էր ելլել: Ուրիշ տեղ մը պատուելին խուժանին առաջնորդները գիտեալուն տանելով խմբուց զանոնք աւելի քաջալերելու համար եւ ինքը անոնց զուլսը անցնելով զնաց Մեթոտականներուն ժողովը խանգարել:

Այս տարուան ընթացքին էր նաեւ որ Մեթոտական եկեղեցին Օքսֆորտի համալսարանին հետ իր յարաբերութիւնը խզեց: Ճան Ուէսլի Օքսֆորտի անդամ (fellow) ըլլալուն ատենը անգամ մը կարգ կ'ունենար հոն քարոզելու: Այս կարգը 1744 Օգոստ. 24ին կրկին իրենը ըլլալուն նա քարոզեց: Այս քարոզը տեսակ մը Մեթոտականներուն յայտարարութիւնը եղաւ: Ուէսլի ստիպողական հրաւեր մը ուղղեց Անկլիքան եկեղեցւոյ առաջնորդներուն, զանոնք բարեկարգութեան վարդապետութեանց հրաւիրելով, եւ խնդրելով անոնցմէ որ այլեւս արթնութեան շարժումին դէմ չկենան: Այս քարոզը եթէ կարելի ըլլայ բաղդատել, կը նմանէր շատ աւելի համեմատ մակարդակի մը վրայ, Լուտերի Ուօրմսի աւագածողովին առջեւ արտասանած «Ահաւասիկ եմ, ուրիշ բան չեմ կրնար խօսիլ, Աստուած ըլլայ օգնականս՝ պատմական խօսքերուն: Այդ օրուան իր օրագրութիւնը հետեւեալն է. «Կարծեմ թէ վերջին անգամը ըլլալով քարոզեցի Սուրբ Մարիամի եկեղեցիին մէջ: Թող ըլլայ: Ես հիմա բոլոր այս մարդոց արինէն անպարտ եմ, իմ հոգիս լման կերպով թեթեւցուցի: Շատ չանցած որոշուեցաւ համալսարանին բեմէն արգիլել Ուէսլիի քարոզութիւնը: Վերադարձնալ թուականը այն օրուան կը հանդիպէր մօտ 100 տարիներ առաջ 2000 պատուելիներ, եկեղեցւոյ ճշմարիտ հոգեւոր լոյսերը, նոյնպէս վտարուած էին Անկլիքան եկեղեցիէն դուրս: Ուէսլի կը գրէ, «Բայց ինչ տարբերութիւն անոնց պարագային եւ իմինիս միջեւ: Անոնք նոյն իսկ իրենց տուններէն վտարուեցան եւ իրենց ստացումները բռնադատուեցան, մինչդեռ զիս միայն քարոզելէ կ'արգիլեն»:

Հալածեալ հաւատացեալները նմանպէս կը վայելէին աստուածային հրաշալի պաշտպանու-

թիւնը: Ու թէեւ մէկէ աւելի անգամներ արիւնը վազեց ու մէկէ աւելի Մեթոտականներ իրենց կեանքը զոհեցին, բայց այսու Ուէսլիի եւ իր գործակիցներուն բացօդեայ ժողովները յաճախ առիթ կուտային աստուածային ակնյայտնի եւ հրաշալի պաշտպանութեան դէպքերու:

Յաջորդիւ անոնցմէ միայն երկու դէպքեր յիշենք:

Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

— — — — —

Հիւրասիրութիւնը մի մոռնաք, վասնզի անով ոմանք հրեշտակներ ընդունեցին չգիտնալով:

Եբր. ԺԳ. 1

Ամերիկայի մէջ բնակող այրի կին մը ծայր աստիճան թշուառութեան մատնուած էր: Իրիկուն մը, երբ սեղանին վրայ կը դնէր կտոր մը հացի եւ աղած ձուկի իր փոքրիկ պաշարը, յանկարծ դուռը զարկին:

Դրան առջեւ օտարական մը կեցած էր եւ քիչ մը ուտելիք ու ապաստանարան մը կը խնդրէր. երկար ատենէ ի վեր ոեւէ բան կերած չէր: Այրին, թէեւ ինքն ու իր զաւակներն ալ նոյնքան անօթի էին, առանց վարանելու սիրով օտարականին հրամցուց այդ խեղճուկ ընթրիքէն իրեն բաժին ինկող մասը:

Օտարականը մօտեցաւ եւ խեղճուկ սեղանը տեսնելով,

— Ի՛նչ, աղաղակեց, ձեր բոլոր ունեցածը ատիկա՞ է, եւ տակաւին ատոր մէկ մասն ալ անծանօթ օտարականի՞ մը կը հրամցնէք. ատիկա ձեր զաւակներուն անիրաւութիւն ընել չըլլա՞ր:

— Ո՛հ, ըսաւ այրին լալով, ես սիրելի զաւակ մը ունիմ որ կը ճամբորդէ: Ան հիմա հեռու երկիր մը կը գտնուի, եթէ Աստուած զայն իրեն կանչած չէ դեռ, եւ ես ձեզի կ'ընեմ միայն ինչ որ կը փափաքիմ որ ուրիշներն ալ անոր ընեն: Տէրը, որ անապատին մէջ մանանան տեղացուց, կարող է մեր պէտքերը հոգալու ինչպէ՞ս որ Իբ ժողովուրդին պէտքերը կը հոգայ: Ատկէ զատ, ինչպէ՞ս կրնայի ես զԱյն վշտացնել

այս ժամուն ձեզ առանց օգնութեան ետ զրկելով: Ո՞վ գիտէ թէ, այս զիշեր իսկ, իմ զաւակս ալ չի թափառիր որպէս խեղճ ճամբորդ, ձեզի նման ամէն պիտոյքէ զուրկ: Ո՞վ գիտէ թէ Աստուած, Իր բարութեամբ, անոր ալ ապաստան մը չի տար:

Այս բառերուն վրայ օտարականը նետուեցաւ դէպի վեհօգի կիսը եւ զայն իր բազուկներուն մէջ սեղմելով,

— Այո, գոչեց, Աստուած ձեր զաւակին հիւրնկալ յարկ մը պարգեւեց, անոր գործն ալ օրհնեց որպէսզի կարողանայ ան ձեզի փոխարինել այն բոլորը որ իրեն ըրած էք: Ո՛հ, մայր իմ, մայր իմ:

Արգարեւ իր զաւակն էր այդ, այն զաւակը, որուն համար այնքան ցաւով արցունք թափած էր: Աստուած զայն ողջ առուջ իրեն կը վերադարձնէր Հնդկաստանէն: Տղան ուզած էր իր ընտանիքը յանկարծակիի բերել, որպէս օտարական ներկայանալով: Գուցէ այս բանին մէջ ան շատ խելացի չէր վարուեր, բայց ի՛նչ կատարեալ եւ ուրախալի անակնկալ:

Այս բարի զաւակը իր ընտանիքը թշուառութենէ ազատելու ուրախութիւնը ունեցաւ, եւ այրին տակաւին շատ մը տարիներ իր զաւակին քով Աստուծոյ բարիքները վայելեց:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Յետագայ նամակը իր շրջանակէն դատուան եւ հեռու տեղ գտնուող աղջկան մը կողմէ գրուած է իր ընկերուհիին:

Սիրելի Օղիկ,

Շատ ուրախ եմ որ դուն զիս կը յիշես եւ ինծի կը գրես: Միշտ զրէ Օղիկ:

Ինչպէ՞ս ես Օղիկ, աղէ՛կ ես Կիրականօրեայ եւ հինգշաբթիւն ալ ժողովներուն միշտ կ'երթա՞ս: Գնա Օղիկ, միշտ գնա, որպէսզի Աստուծոյ վախին մէջ մեծնաս եւ Աստուած քեզ օրհնէ:

Եթէ զիս հարցնելու ըլլաս, ողջ առողջ եմ, փառք Հայր Աստուծոյ: Սկսած եմ աշխատիլ, բաւական դժուար է գործս:

Օղիկ, միշտ Յիսուսը սիրէ եւ ամէն օր Աստուծոյ խօսքը կարդա: Հայրիկիդ եւ մայրիկիդ միշտ հնազանդ եղիր, բայց երբ գէշ բաներ կ'ըսեն քեզի ընելու, մի ընէր, հապա Աստուծոյ հնազանդիր:

Յովսէփ, դուն ալ բարի եղիր, որպէսզի Յիսուս Պապան քեզ օրհնէ: Գիտե՞ս, անուշիկ Յովսէփ, Յիսուս Պապան մանուկները շատ կը սիրէ:

Օղիկ, ինծի համար միշտ աղօթէ, ես ալ քեզի համար պիտի աղօթեմ:

Ձերմ համբոյրներով, ընկերուհիդ

X

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆՍ ԱԿԸ “ՅԻՍՈՒՍ,,

Ազատ Թարգ. Յ. Ն. Դ.

Արագ- ջութար

1. Իմ սրբոյ տիկնոջ հանձնէ ներգաշնակ
3. Իմ սրբոյ տիկնոջ հանձնէ ներգաշնակ

2. Եւ զուարթ եւ զաւանգ 5. սի - րոյ

Կրկ.

Յի - սուս, Յի - սուս Յի - սուս Ինչ քաղցր եւ հագ - ալս

Պաշտեմք եղ Տէր Յի - սուս 2. Ինչ կուտաս կեանք եւ յոյս.

1
Իմ սրբոյ տիկնոջ հանձնէ ներգաշնակ
Ո՛հ, այնքան՝ ներգաշնակ
Մի զուարթ եղանակ...
Իմ սրբոյ տիկնոջ հանձնէ ներգաշնակ
Մի զուարթ եղանակ ՄԵՂԲԵՐՍՈՅ:

2
Ձի Տէր Յիսուս մեռաւ ինձ համար,
Ո՛հ, մեռաւ ինձ համար,
Եւ ներքեց անհամար...
Ձի Տէր Յիսուս մեռաւ ինձ համար
Եւ ներքեց անհամար ՄԵՂԲԵՐՍՈՅ:

3
Եւ այժմ է Ան միշտ ուրախութիւնս
Եւ իմ մեծ ցընծութիւնս
Աւ Անորն է իմ սիրտս...
Եւ այժմ է Ան միշտ ուրախութիւնս,
Աւ Անորն է իմ սիրտս ՀԱՄԱԿ:

4 (կրկնորդ)
Յիսուս, Յիսուս, Յիսուս,
Ի՛նչ քաղցր եւ հոգւոյս,
Պաշտեմք եղ Տէր Յիսուս
Ձի ինչ կուտաս կեանք եւ յոյս:

Այս երգը պիտի երգուի վերէն ի վար մէկ կտորի նման: Ուրախ, թարմ եւ զուարթ ձայնով մը եւ արագ: Հող է անոր գեղեցկութիւնը:

Եղանակը հետեւեալ կերպով կարգաւոր ենք,

Ա. Նախ կ'երգեն (1)ը, եւ առաջին տողը լման երգելէ յետոյ կ'անցնինք (2)ը երգելով մինչեւ դադարը: Դադարին վրայ կ'անելէն յետոյ նոյն աշխուժութեամբ վերսկսինք (1)էն, միայն թէ այս անգամ (3)ը ուշադրութեան կ'առնենք, նաեւ զիծը որ բնականաբար չերգուիր. ու (3)ը երգելէ յետոյ կ'անցնինք (4)ին որ (2)ին խօսքերով ըլլալուն կրկին գրուած է, եւ կը շարունակենք (5)ը:

Բ. Երեք համարները այսպէս իրարու հետեւ կ'երգենք առանց կրկնելու:

Գ. Ամենէն վերջը կրկնելով կ'երգենք ճիշդ կըրկին արագութեամբ եւ միայն մէկ անգամ:

Դիւս. Կրկնելով ինքնին բոլորովին տարբեր երգ մըն է, բայց այնքան կը յարմարի վերինին որ անոր հետ կցած ենք:

Առաջին մասը վկայութիւն մըն է Յիսուսի համար, իսկ երկրորդը (կրկնելով) պաշտամունք մը առ Յիսուս:

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՉ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷԼ—Հովիւ' (Վեր.) Յ. Ն. Ղալարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille
15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse
8 30ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ
Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Լէզ Օլիվ, Սէն ժէրմ, Ս. Միշր, Ալ, Պոլ-
վար Օտո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շարաժամիչի ժողովներ

Բ.շք. ժամը 2ին Սէնժուլիէն,
Դ.շք. ժամը 2ին Սէն ժուլիէն եւ Լէզ Օլիվ
Դ.շք. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse
Ե.շք. ժամը 20ին Սէն ժէրմ
Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն ԼՈՒ.—Բարոյիչ Պատ. Վաիան Սաիակեան
Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:
9. 30ին Ս. Գրական ուսումնա.
16ին քարոզածողով:

Սէնժ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՄՅՕԹԱ.— Բարոյիչ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30ին աղօթածողով
Ֆրանս. եկեղեցիին մէջ
15ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Վեր. Ա. Փափաղեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:
16. 30ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄԹՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց
14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ. Բոֆ. Դ. Դ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence
(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Վեր. Դ. Պարսամեան,
18, Rue du Dr. Rebatei

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,
5 Cours Lafayette, 8 Passage Coste.
11ին աղօթածողով նոյն տեղը:
15ին երիտասարդութիւններու
ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatei.

ՏէՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

Սէն ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:
Վիէն.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆՅԵ ԷՐԻԷՆ—Բարոյիչ Պատ. Ի. Արրամեան
60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով
57 Rue de la République
17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻԶ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով
37 Rue Tournesfort Paris 5^e
Metro Mouhe Aut. K

Ամսոյն Դ. կիրակին ժամը 16. 30ին Ե.
Ք. Լ. երկուսն միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.— Բարոյիչ Պր. Մ. Վէֆիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց
Կիր. ժամը 10ին պաշտամունք
երկու կիր. անգամ մը 7.30ին երիտ. խառն ժողով
Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՆԱԿ

Խմբագրական շնորհակալութիւն.— Ծննդեան եւ նոր տարուան առթիւ մեզի հասած բազմաթիւ շնորհատրական քարդերուն եւ մաղթանքներուն համար մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր սիրելիներուն: Որքա՛ն սիրտի փափաքէինք իւրաքանչիւրին պատասխանել անձամբ, այսու ամենայնիւ մարմնական ուժերն ու ժամանակը մեզի չեն թուլատրեր իւրաքանչիւրին անհատապէս գրելու, հապա ամենուն միասնաբար այս նոր տարուան համար կը մաղթենք նոր ոյժ, նոր աշխոյժ, նոր արթնութիւն եւ հոգեւոր նոր տեսիլքներ: Երկնային աղբիւրները առատապէս բացուին Ձեզմէ իւրաքանչիւրին վրայ, ուրախութեամբ եւ յաղթական անցելու կեանքի փշոտ ու մուլթ ճամբաներէն Իրեն փառքին համար:

Շնորհակալ ենք նաեւ իւրաքանչիւր նոր հասցէի համար որ այս տարի զրկուեցան մեզի «Բանբեր»ի ընտանիքին անդամներէն ոմանց կողմէ: Այս տարի աւելի քաջալերուած ենք եւ նոր տարիին աւելի ուրախութեամբ սկսանք քան ուրիշ տարիներ: Դեռ նոր հասցէներու ալ կ'սպասենք, որոնց համար կանխաւ շնորհակալութիւն կը յայտնենք: Շնորհակալ ենք անոնցմէ, որոնք իրենց ազօթքներուն հետ մէկտեղ գործնականապէս ալ մեզի դորձակցեցան եւ պիտի գործակցին «Բանբեր»ի տարածման գործը իրենց զուգուրոտ ջանքերուն առարկայ ընելով: Ձեր նամակներէն իւրաքանչիւր քաջալիրական խօսք մեզի համար ներքին գոհացում տուող վարձատրիչ ազդակներ են: Տէրը օրհնէ Ձեզ եւ «Բանբեր»ն ալ Ձեզի համար ու Ձեր միջոցաւ նաեւ ուրիշներու:

«Բանբեր»ի Օրացոյցը.— Մեզի եղած բազում դիմումներուն ստիպուած ենք ցաւ ի սիրտ պատասխանել թէ 1936 տարուան «Հայ ընտանիքին օրացոյցը» արդէն սպառած է, եւ այս տարի այլեւս դիմումները նկատի չենք կրնար առնել: Պիտի խնդրէինք որ օրացոյցի համար չսպասէք տարուան մինչեւ վերջին օրերը կամ երբ արդէն նոր տարին սկսած է: «Բանբեր»ի օրացոյցը ընդհանրապէս Սեպտեմբերի սկիզբը արդէն պատրաստ կ'ըլլայ:

Խմբագրական դիտողութիւններ.— Այս թիւին մէջ ապուած երգի քիչէին ծագքը վճարուած է Մարտէլի կիր. դպրոցի աշակերտաց կողմէ, որոնք երգը առաջին անգամն ըլլալով սորվելու ուրախութիւնն ունին եւ կը փափաքէին որ բոլոր Հայ կիր. դպրոցներն ալ սոյն երգը երգեն իրենց խնդակից ըլլալով: Եթէ կան կիր. դպրոցներ եւ անհատներ որոնք պիտի փափաքէին իրենց երգը ծանօթացնել եւ ծախքն ալ հետը կը դրկեն, պատրաստ ենք նկատի առնելու: Այսպիսի երգի մը քիչէն 25 ֆր.ով կը պատրաստուի: Ձեր գործակցութեան կ'սպասենք: Ունինք բաւականաչափ երգեր:

Ջայնիւր մօտէն ու հիւուէն.—

Պ... 19 Դեկտ. 1935

— «Բանբեր»ը մեր ընտանիքին համար օրհնութեան աղբիւր մը եղած է, եւ ամէն ամիս անհամբեր կ'սպասենք անոր: Աստուած օրհնէ Ձեր աշխատանքը:

Պ... 30 Դեկտ. 1935

— «Բանբեր»ը մեզի շատ օգտակար կ'ըլլայ, շնորհակալ ենք անոր համար:

Հ... 15 Դեկտ. 1935

— 1935 տարուան Դեկտեմբերի «Բանբեր»ի վերջին թիւը ընդունած ենք. շնորհակալութիւն: Մեզի բերած նորանոր պատգամները կարգալով ամէն անգամ Տէրոջը փառք կուտանք եւ կ'ազօթենք որ «Բանբեր» յառաջիկայ տարուան մէջ ալ հաստատուն քայլերով յառաջդիմէ: